Հավելված 2
2024 թ. _փետրվարի 07 -ին
*կնքված N ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԾ պայմանագրի*

Դրամաշնորհային հաշվետվություն N____03______

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Գյումրու Փոքրիկ Իշխան ցերեկային խնամքի սոցիալական կենտրոն |
| Դրամաշնորհի N | *ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԾ* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | Հայկական Կարիտաս բարեսիրական ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | Հունվար 2024թ. – Դեկտեմբեր 2024թ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01 Հուլիս – 30 Սեպտեմբեր 2024թ. |
| Ներկայացման օր | Հոկտեմբերի 14, 2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Աննա Մարտիրոսյան, Կենտրոնի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| <u>Համառոտ նկարագիր.</u> Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոն է հաճախել և ծառայություններից օգտվել ընդհանուր թվով **104 երեխա, /76 ընտանիք/:**<br>Հաշվետու շրջանում Կենտրոն է ընդգրկվել **22 նոր երեխա /20 ընտանիք/** և ելք է արվել **23 երեխա /20 ընտանիք/:** Հաշվետու շրջանում Կենտրոն են հաճախել թվով **17 հատուկ կարիք և հաշմանդամություն ունեցող երեխա: 14 Արցախից** բռնի տեղահանված ընտանիքի երեխաներ, որոնք մասնակցել են տարբեր միջոցառումների:<br>Կենտրոնի բոլոր երեխաները, ըստ յուրաքանչյուր երեխայի համար կազմած անհատական միջամտության պլանների, մասնակցել են Կենտրոնի կողմից տրամադրվող ծառայություններին. սոցիալ-հոգեբանական, լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքներ, խմբակներ, միջոցառումներ, դասընթացներ, ուսուցողական այցեր և այլն: */Տես ամսական երեխաների ցուցակ – ծառայության հակիճ նկարագրություն մասում/* |

Կենտրոնի գործողությունների իրականացմանը ներգրավված են եղել 3 սոց. աշխատող, 1 հոգեբան, 1 լոգոպեդ, 5 խմբավար/մանկավարժ, մեկ խոհարար, մեկ տնտեսուհի, 5 կամավոր և 1 համակարգող:

*Ցերեկային խնամքի կենտրոնի անձնակազմը հաշվետու շրջանում երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների, կյանքի հիմնական հմտությունների զարգացման նպատակով իրականացրել է աշխատանքային պլանով, թիվ 1 և 7 հավելվածով սահմանված հետևյալ գործողությունները:*

1. Սոցիալ-հոգեբանական, լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքներ:
2. Մասնագիտական կողմնորոշման խմբակներ:
3. Միջոցառումներ, այցեր:
4. Փափուկ հմտություններ:
5. Համայնքային նախաձեռնություն:
6. Բնապահպանական ճամբար:
7. Բնահրային աջակցություն:
8. Դասընթացներ/վերապատրաստումներ աշխատակիցների համար:

<u>1. Սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական աշխատանք երեխաների և ծնողների հետ</u>

***Սոցիալական անհատական աշխատանք*** է կատարվել 23 երեխայի և 15 ծնողի հետ: Կարիքի գնահատում և վերագնահատում է իրականացվել թվով 9 երեխայի և 8 ծնողի հետ: Իրականացվել է առաջնային և կրկնակի տնայցեր՝ նախնական և վերագնահատման նպատակով:

**Անձնական օգնականի** աջակցությունից օգտվել է հաշմանդամություն ունեցող 1 երեխա:

**Արտակենտրոն ծառայություն** մատուցված երեխան արդեն տեղափոխվել է Երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոն ՊՈԱԿ, որից հետ աշխատանքները Փոքրիկ Իշխան Կենտրոնում ավարտվել են:

**Համատեղ դեպքի քննարկումներ** են իրականացվել ՄՍԾ-ի հետ Արցախցի ընտանիքներին բնահրային աջակցություն տրամադրելու կապակցությամբ:

**Երեխաների հետ անհատական սոցիալական աշխատանքը** կատարվել է հետևյալ թեմաների շուրջ՝ կարիքի գնահատում, ուղղորդումներ, հարաբերությունների դժվարություններ հասակակիցների, ընտանիքի անդամների հետ, ներանձնային դժվարություններ, կոնֆլիկտների հաղթահարում, խնդիրներ դպրոցում, կրթությունից դուրս մնալու խնդիրներ, ագրեսիվ վարք, մասնագիտական կողմնորոշում, առողջ ապրելակերպ, առողջական խնդիրներ, վարքային խնդիրներ, հետաքրքրություններ, նախասիրություններ, վախեր և անհանգստություններ, երեխայի հուզականություն, ցածր ինքնագնահատական, մասնագիտական կողմնորոշում և այլն:

**Երեխաների հետ խմբային սոցիալական աշխատանք** են իրականացրել հոգեբանը, սոց.աշխատողը և լոգոպեդը: Հաշվետու շրջանում իրականացվել է 2 մշտական խումբ, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ և մեկ անգամյա խումբ:

1-ին խումբ, խոսքային խնդիրներով պայմանավորված խումբ, լոգոպեդ՝ Ա. Նահապետյան:

2-րդ խումբ, 13-15 տ 10 երեխա, սոց. աշխատող՝ Ա. Սարգսյան: Կյանքի հմտություններ թեմաներով:

3-րդ խումբ, 12-15 տ 10 երեխա, հոգեբան՝ Հ. Խորոտյան: Կյանքի հմտություններ թեմաներով:

Կյանքի հմտություններ են դասավանդվել հետևյալ թեմաներով՝ Ինքնաճանաչում, Ես, իմ խորհրդանիշը, իմ կարգախոսը, Հույզեր, Բռնության սահմանումը, տեսակները, Բռնության ցուցիչները:
**Ծնողների հզորացման դասընթաց:** Դպրոցների ծնողական խորհուրդների թիմը Կենտրոնի ծնողների համար «Ներառական ծրագրի» շրջանակներում կազմակերպել էր դասընթաց՝ աուտիզմով և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու թեմայով: Դասընթացին կենտրոնից ընդգրկվել էին 13 ծնողներ, որոշ ծնողներ ունեին խնդիրներով երեխաներ:
**Ծնողների հետ անհատական սոցիալական աշխատանքը** կատարվել է հետևյալ թեմաների շուրջ. Կենտրոնի աշխատանքների ներկայացում, պայմանագրի և ներքին համաձայնագրի կնքում, ընտանիքին վերաբերող փաստաթղթերի փոխանցում, Առողջական խնդիրներ /հղիություն/, Ծնողավարման հետ կապված հարցեր, Կրթական հարցեր, Կենտրոնի հաճախելիություն, Խնդիրներ դպրոցում/երեխայի դպրոցը փոխելու համար անհրաժեշտ ընթացակարգեր, Երեխայի մասնագիտական կողմնորոշում, Կենտրոնում երեխայի և ընտանիքի ստացած ծառայությունների ամփոփում և դուրս գրում,
***Հոգեբանական անհատական աշխատանք և խորհրդատվություն*** է իրականացվել **14 երեխայի և 4 ծնողի:**
Երեխաներից 3-ը, ովքեր ունեին շփման և արտահայտման դժվարություններ, զարգացումներ և փոփոխություններ ունենալով թերապևտիկ պրոցեսում, դեռևս շարունակում են ամրապնդման աշխատանքները: Երխաներից 3-ը ովքեր ունեին ներընտանեկան խնդիրներով պայմանավորված ծնող-երեխա փոխհարաբերություններում դժվարություններ նրանց ծնողների հետ շարունակական աջակցող բնույթի աշխատանքներ են կազմակերպվել:
2 երեխաները ունեն հատուկ կարիքներ և անհրաժեշտություն կա աշխատանքը շարունակել վարքի կարգավորման, ճանաչողական ոլորտը խթանող աշխատանքների կազմակերպման մասով: Եվ այս աշխատանքների մեջ ներգրավել նաև ծնողներին: Հաջորդ 2 երեխաները ունեն հասակակիցների հետ շփման դժվարություններ, որոնք արտահայտվում են վարքային դժվարություններով: Այս մասով կազմակերպվել է դիտում և հետազոտական պրոցես:
Ծնողներից 1-ի հետ աշխատանքը կատարվում է ընտանեկան թերապիայի շրջանակում: Հաջորդ 2-ի հետ կատարվել է անհատական թերապիա ծնողավարման մասով աջակցելու նպատակով, որը զուգակցվել է նաև ընտանեկան թերապիայով: Մեկի հետ անցկացվում է անհատական հոգեբանական թերապիա:
**Լոգոպեդական աշխատանք:** Հաշվետու ժամանակահատվածում լոգոպեդը իրականացրել է առաջնային հետազոտություն և շարունակական աշխատանք: 1 երեխայի հետ առաջնային զննում իր ծնողի հետ. Երեխան ունի աուտիզմի սպեկտրի խանգարում. Խորհրդատվությունը կատարվել է ծնողի հետ: Այս երեխային ուղղորդել են Ավստրիական վերականգնողական հիվանդանոցից, որպեսզի մենք հետազոտենք և հասկանանք՝ արդյոք երեխան կարող է ընդունվել մեր կենտրոն: Երեխան վաղուց ստացել է նեղ մասնագիտական ծառայություններ, այժմ փորձում են ապահովել երեխայի սոցիալականացումը:
Շարունակական աշխատանքներ են իրականացվել 5 երեխայի հետ:
1-ին աղջիկ- Այս երեխայի հետ իրականացվել է անհատական աշխատանք, գրավոր խոսքում ամրապնդվել են շփոթեցնող ու փոխարինող հնչյունները, նա կատարում է իրեն տրված առաջադրանքները, հասկանում է առաջադրանքների իմաստը, պահանջվող լուծումը: Աղջիկը գրավոր խոսքում շփոթեցնող ու փոխարինող հնչյունները գրում է գրեթե անթերի: Տրված բառերով կարողանալ բառակապակցություններ կազմել և այն վերածել նախադասության և պատմվածքի: 2-րդ տղա - Տղան կատարում է թուլացում, շնչառություն և ձայնային վարժություններ: Ձևավորել է դանդաղ և սահուն խոսք: Խոսքը համեմատաբար ավելի հարթ է դարձել, կակազությունը՝ նվազել: 3-րդ աղջիկ - Աղջիկը վերծանում է ռեբուսներ: 4-րդ - Տղան

կատարում է բանավոր վարժություններ, առաջադրանքների միջոցով զարգացնում են նուրբ շարժիչ հմտությունները: Մ հնչյունը ճիշտ դիրքում ամրապնդվել է, տարբերվել է Շ հնչյունից:
5-րդ աղջիկ - Աղջիկը որոշ դժվարությամբ աշխատում է սենյակում ըստ կանոնների: Նա դասնի համախտանիշ ունի:

2. Մասնագիտական կողմնորոշման խմբակներ

Խմբակների 3-րդ փուլը սկսվել է հունիս – օգոստոս ամիսներին: Իսկ 4-րդ փուլը՝ սեպտեմբեր – դեկտեմբեր ամիսներին:

3-րդ փուլում /հունիս-օգոստոս/ գործել է հետևյալ խմբակները, որին մասնակցել են 48 երեխա:

- ✓ Առողջ ապրելակերպ
- ✓ Համակարգիչ
- ✓ Նկարչություն
- ✓ Փայտագործություն

4-րդ փուլում /սեպտեմբեր-նոյեմբեր/ գործում է հետևյալ խմբակները /56 երեխա /

- ✓ Համակարգիչ
- ✓ Կար ու ձև
- ✓ Նկարչություն
- ✓ Փայտագործություն
- ✓ Խոհարարություն

Յուրաքանչյուր խմբակում գործում է 2 տարբեր խումբ: Հաշվետու շրջանում բոլոր խմբակները իրականացրել են պլանով նախատեսված աշխատանքները:

3. Միջոցառումներ, այցեր

Հաշվետու շրջանում կազմակերպվել է հետևյալ միջոցառումները:

**09 հուլիս – Էքսկուրսիա Լոռու մարզ:**

32 երեխա և 5 աշխատակից էքսկուրսիա իրականացվեց դեպի Դսեղի լճեր, Սանահին և Հաղբաթ վանական համալիր: Էոսկուրսիայի ընթացքում 12 երեխա առողջ ապրելակերպի մարզիչի և համակարգողի հետ իրականացրեց քայլարշավ:

**10-12 հուլիս – Կրթական ամառային ճամբար Թորոս գյուղի Աղաջանյան ճամբարում:**

Կենտրոնի 4 երեխաներ մասնակցեցին աշակերտական խորհրդի ամառային ուսումնական ճամբարին՝ ներառական, կրթություն, նորարարություն թեմաներով: Ճամբարը կազմակերպել էր Հայկական Կարիտասի „Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացման„ ծրագիրը:

**19 հուլիս - Միջմշակութային երկխոսություն բաց երկնքի տակ:**

Կենտրոնը իրականացրեց *Միջմշակութային երկխոսություն բաց երկնքի տակ* խորագիրը կրող միջոցառում: Միջոցառմանը մասնակցեցին ավելի քան 30 երեխա Կենտրոնից և Ֆրանսիայից ժամանած 25 դեռահաս: Միջմշակութային միջոցառումը բաղկացած էր 3 մասից:

Առաջին մասում երեխաները տարբեր խմբերով մասնակցեցին *այգեգործության, էկո պայուսակների պատրաստման, նկարչության և պարի* գործնական աշխատանքներին, որտեղ և հնարավորություն ունեցան միմյանց հետ շփվելու:

Երկրորդ մասում երեխաները մասնակցեցին *Երկնքից մի կտոր* արտ պերֆորմասին, որը կազմակերպել էր Գյումրեցի նկարիչ՝ *Վազգեն Թադևոսյանը*: Կապույտ կտորը, որի մեջ էին հայտնվել երեխաները, խորհրդանշում էր երկնքի մի կտոր, իսկ ծիրանագույն գլխարկները՝ արևի շողերը:

Երրորդ մասում երեխաները թիմերով խաղացին սպորտային մրցութային խաղեր, որից հետո Իրական դպրոցի պատասխանատու՝ *Մանիկոն Վարդերեսյանը* երեխաներին սովորեցրեց ռազմական, ծիսական հայկական միասնական պարեր՝ բացատրելով դրանց խորհուրդը:

**28 հուլիս - Հատապտուղների փառատոն Հայկավան գյուղում:**

Գյումրիի և Արտաշատի «Փոքրիկ Իշխան» կենտրոնները մասնակցեցին Շիրակի մարզի Հայկավան գյուղում անցկացված Հատապտուղների փառատոն 2024-ին: Փառատոնին ակտիվորեն մասնակցեցին Գյումրու կենտրոնից 15 երեխաներ՝ ներկայացնելով ոչ միայն ձեռքի աշխատանքները այլ նաև իրենց պարերը: Փառատոնի ավարտին Գյումրու Կենտրոնի սաները արժանացան «Այցելուների համակրանք» մրցանակին:
**08 օգոստոս – Բոուլինգ ամառային ճամբարում հաղթող թիմի համար:**
**16 օգոստոս – Երեխաների Իրավունքներ միջոցառում:**
Կենտրոնի 10 երեխա Խաչմերուկ հիմնադրամում մասնակցեցին երեխաների իրավունքների խնդիրների մասին հեքիաթների բեմադրությանը:

**4. Փափուկ հմտություններ**

**Պլանավորման և առաջնորդության հմտությունների դասընթաց**

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել և ավարտվել է պլանավորման և առաջնորդության հմտությունների դասընթացը 16-19 տարեկան 13 երեխաների և երիտասարդների համար: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 8 դասընթաց հետևյալ թեմաներով.

- CV-ի, մոտիվացիոն նամակի ներկայացում և հարցազրույցի նախապատրաստություն,
- Բնապահպանական թեմաների վերաբերյալ դասընթաց, հրավիրված դասընթացավար
- Թիմի ձևավորում և թիմային աշխատանք,
- Ներառական առաջնորդ, հրավիրված դասընթացավար,
- Թղթի վերամշակման դասընթաց, հրավիրված դասընթացավար,
- Պլանավորման և իրականացման հմտություններ / 3 դասընթաց/

**5. Համայնքային նախաձեռնություն**

Հաշվետու ժամանակահատվածում 10 երեխա մասնակցել է համակարգողի կողմից իրականացվող համայնքային նախաձեռնություններ ծրագրին:

- ✓ 02 հուլիս – Դասընթաց համայնքային գործունեության և կենտրոնի տարածքի մաքրման աշխատանքների վերաբերյալ:
- ✓ 04 հուլիս – Սոցիալական պատասխանատվության դասընթաց
- ✓ 04 հուլիս - Կենտրոնի բակի մաքրում, բերքահավաք գործնական աշխատանքներ:
- ✓ 23 հուլիս – Համայնքային աշխատանք, դասընթաց

Այնուհետև երեխաների հետ իրականացվեց գործնական աշխատանքներ: Երեխաները նախագիծ առաջարկեցին մանկապարտեզում: Նպատակը երեխաների հետ զարգացնողական և ժամանցային խաղերի կազմակերպումն էր:
14, 16 օգոստոս - Համայնքային նախագիծ, Պլանավորում – գործնական հմտություններ:
19, 21, 23 - Գործնական աշխատանքների կազմակերպում մանկապարտեզում:

**6. Բնապահպանական ամառային ճամբար**

2024 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 2-ը «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Գյումրու «Փոքրիկ իշխան» կենտրոնը իրականացրեց բակային Էկո ճամբար կենտրոնի երեխաների համար, որին միացան նաև 16 արցախցի երեխաներ և 15 երեխաներ՝ համայնքից: Ընդամենը մասնակցեց 93 երեխա:

- ✓ Էկոճամբարի նպատակն էր կրթել էկոգաղափարակիր երեխաներ, որոնք կկարողանան դրական ազդեցություն ունենալ հասարակության մեջ: Ճամբարի բոլոր գործողություններն ունեին բնապահպանական ուղղվածություն, որոնք ներառում էին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլ նաև պրակտիկ գործողություններ:

- ✓ Ջոկատավարները ընտրվել են Կենտրոնի 16+ տարեկան երեխաները, որոնք անցել են վերապատրաստման տարբեր դասընթացներ: Կազմակերպչական թիմին էին միացել նաև նախկին սաները: Կազմվել էր 5 ջոկատ. Արև, Հող, Ջուր, Քամի, Անտառ անվանումներով, ովքեր մշակել էին իրենց նշանաբանը և դրոշը: Ջոկատները միմյանց հետ մրցել են 5 օրերի ընտացքում և վաստակել միավորներ: Միավորների արդյունքում հաղթող ջոկատ է ճանաչվել Ջուր ջոկատը և վաստակել հաղթանակը: Հաղթող ջոկատի մրցանակն էր Բոուլինգ և էքսկուրսիա: Ջոկատավարները ստացան էկո վկայականներ՝ ճամբարի ընթացքում պատրաստված վերամշակված թղթերից:

Էկո ճամբարի օրակարգում տեղ էին գտել՝

- ✓ Դասընթացներ՝ թղթի վերամշակում, սոցիալական ներառում, երկիր մոլորակը և ես,
- ✓ Բնապահպանական թեմայով TedX ելույթներ,
- ✓ Ինտելեկտուալ և թիմային ակտիվ խաղեր, Սպորտլանդիա, Ֆորտբոյար,
- ✓ Թափոնների վերամշակում. պոլիէթիլենային տոպրակներից ստացած թելերով պայուսակներ, պլաստիկ շշերից պատրաստած տարբեր իրեր,
- ✓ Պրակտիկ աշխատանքներ. բույսերի տնկում, պաստառների պատրաստում, բնության մակետներ՝ պատրաստված թափոններից և բնական նյութերից:

**<u>7. Բնաիրային աջակցություն</u>**

Հաշվետու շրջանում 80 ընտանիքի տրամադրվել է գրենական և հիգիենիկ պարագաներ: Արցախից բռնի տեղահանված 1 ընտանիքի տրամադրվել է գազի կտրոն, չոր սննդի փաթեթ և հագուստ երեխաների համար: Օրական 1 անգամ տրամադրվել է տաք սնունդ կենտրոն հաճախող բոլոր երեխաների համար: 1 երեխան այցելում է 2-3 անգամ, որոշ երեխաներ նաև 4 անգամ, կախված երեխայի կարիքներից և ծառայություններից:

**<u>8. Դասընթաց / վերապատրաստում/սեմինար աշխատակիցների համար</u>**

**11 հուլիսի** – Վարքագծի վերլուծության մեջ հմտությունների ձեռքբերման սկզբունքները, դասընթաց: Մասնակից – մասնագիտական թիմ, խմբավարներ:

**07 – 08 օգոստոս** – Մասնագիտական այրման կանխարգելում, դասընթաց: Մասնակից - սոցիալական աշխատողներ:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքների արդյունքում բարելավվել են երեխաների սոցիալական հմտությունները: Բարելավվել է ծնող-երեխա միջանձնային փոխհարաբերությունները, հեշտությամբ են մտնում երկխոսության մեջ, հետևում են անձնական հիգիենային, կարևորում են կրթությունը, գիտակցում են իրենց իրավունքները, սահմանները, կարիքները և խնդիրները: Խոսքի զարգացման խնդիրներ ունեցող երեխաների մոտ նկարվում է խնդիրների հաղթահարում և սոցիալականացման լայն շրջանակ:

Մասնագիտական կողմնորոշման խմբակները օգնել են երեխաներին ձեռք բերել գիտելիք և հմտություններ: Օրինակ խոհարարության խմբակի մասնակից երեխաները պատրաստել էին ճամբարի տորթը, հաստատուղների փառատոնի թխվածքները, առողջ ապրելակերպին մասնակցած երեխաները կարևորում են ճամբարները, սպորտային խաղերը և մարզումները, կար ու ձևի խմբակի երեխաները պատրաստել են էկո պայուսակներ, համակարգչային խմբակի երեխաները ձեռք են բերել համակարգչով աշխատելու հմտություններ, տեքստերի տպում, աղյուսակների կազմում, որն էլ կիրառել են էկո ճամբարի շրջանակներում: Նկարչության խմբակի երեխաները ամբողջովին իրենց վրա են վերցրել բոլոր միջոցառումներում անհրաժեշտ նկարազարդ աշխատանքները:

**Միջոցառումները** խթանել են երեխաների և ծնողների ազատ արտահայտմանը, շփմանը և հաղորդակցմանը: Ձեռք են բերել գիտելիքներ միջմշակութային երկխոսությունից, երեխաների իրավունքներից: Համագործակցային միջոցառումները նպաստել են երեխաների աշխարհայացքի ընդլայնմանը, հասակակիցների և անծանոթների հետ ազատ շփմանը:

**Փափուկ հմտությունների դասընթացները** երեխաներին օգնել են ձեռք բերելու թիմային աշխատանքի, առաջնորդության, պլանավորման և իրականացման հմտություններ: Նշված հմտությունները երեխաներին օգնել են բնապահպանական ճամբարում ստանձնել ջոկատավարների դերը:

**Համայնքային նախաձեռնությունը** օգնեց երեխաներին ավելի հստակ պատկերացնել իրենց Կենտրոնի ռեսուրսները և դրանց օգտագործման ճիշտ ձևերը: Դասընթացների և պրակտիկ աշխատանքների շնորհիվ սովորեցին սնաձնել պատասխանատվություն և կատարել դերաբաշխումներ:

**Էկո բակային ճամբարի** ավարտին երեխաների արված հետադարձ կապը ցույց է տվել, որ վերջիններս ձեռք են բերել երկիր մոլորակի և բնապահպանության վերաբերյալ գիտելիքներ և կարևոր հմտություններ: Բարձր են գնահատել բնությունը, ընկերսիրությունը, թիմային աշխատանքը և փոխօգնությունը դառնալով Փոքրիկ Իշխան Կենտրոնի էկոգաղափարակիրներ:

<u>Հաջողված պատմություն</u>

Անահիտ Գրիգորյանը /ծնվ. 21.07.2006 թ./ կենտրոն է ընդգրկվել 12.04. 2019թ.-ին: Կենտրոն դիմել է աղջկա մայրը, ով «Փոքրիկ Իշխանի» մասին իմացել է երեխաների համադասարանցիներից: Մայրը երեխաների խնամքով ու դաստիարակությամբ զբաղվում է միայնակ, հայրը լքել է ընտանիքը, չի աջակցում նաև ֆինանսապես: Կենտրոն ընդգրկվելու պահին աղջիկը գտնվում էր մայրական տատիկի ու մայրիկի խնամքի տակ: Անահիտը ուներ շփման ու հաղորդակցման դժվարություններ, ինքնամփոփ էր, ցածր ինքնագնահատականով, ուներ կոնֆլիկտներ քրոջ հետ: Անահիտի հետ անցկացվել են սոցիալ-հոգեբանական անհատական ու խմբային աշխատանքներ, մայրը մասնակցել է ծնողավարման դասընթացների: Եվ երեխաները, և մայրը մասնակցել են առաջնորդության, ծրագիր գրելու, աշխատանք փնտրելու հմտությունների դասընթացներին և Ինովարիում նորարարական երկարաժամկետ ծրագրին: Ինովարիում ծրագրի շրջանակներում Թբիլիսիում մասնակցեց երիտասարդների փորձի փոխանակման ծրագրին:

Անահիտի առաջին հաջողությունը գրանցվեց այն ժամանակ, երբ կենտրոնում կազմակերպված ամառային բակային ճամբարում համարձակություն հավաքեց ցանկություն հայտնել զբաղվել իր սիրած ու իրեն հետաքրքրող գործով: Անահիտը

պատասխանատվությամբ ստանձնեց ֆոտո և վիդեո նկարահանումները: Դրանից հետո կենտրոնում և կենտրոնից դուրս տեղի ունեցող բոլոր միջոցառումները լուսաբանում էր Անահիտը: Մի քանի ամիս առաջ Անահիտը գրանցվեց «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի գլխամասում որպես PR ոլորտի կամավոր: Նրա աշխատանքները, պատասխանատվությունն ու մարդկային որակները տեսնելով՝ գրասենյակում որոշում են կայացրել քիչ ժամերով աշխատանքի վերցնել որպես PR աշխատակցի օգնական: Հարկ է նշել նաև, որ Անահիտը որպես փոխարինող աշխատել է նաև գրասենյակի ընդունարանում: Իր հաջողություններով ոգևորված՝ Անահիտը որոշում է կայացրել կանգ չառնել այս ամենի վրա և շարունակաբար աշխատել կրթության վրա: Նա ընդունվել է PR դպրոց, սկսել է սովորել անգլերեն, համատեղում է զբաղվածության հետ նաև վերցնել այլ աշխատանքներ՝ գովազդել այլ գործատուների համար, պատրաստել վիդեո և ֆոտո շարքեր:

Շարունակական աշխատանքներն ու մասնագիտական աջակցությունը աղջկան օգնել են՝

- ✓ հաղթահարել սոցիալ-հոգեբանական մի շարք խնդիրներ, վստահել է սեփական ուժերին, ազատ արտահայտում է իրա կարծիքը
- ✓ կարևորել կրթությունը,
- ✓ ձեռք բերել գիտելիքներ ու հմտություններ, որոնք թույլ են տալիս գումար վաստակել ու արդեն որպես չափահաս օգնել ընտանիքին,
- ✓ ձեռք է բերել որոշում կայացնելու և նպատակներ օրականացնելու հմտություններ:

*Սոցիալական աշխատող՝ Անի Աղայան*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

https://www.facebook.com/watch/?v=512233624708512
Կրթական ճամբար՝ «Ներառականություն, կրթություն, նորարարություն»
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/890909173073351
Միջմշակութային երկխոսություն բաց երկնքի տակ
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/894733096024292
Հատապտուղների փառատոն
https://www.facebook.com/watch/?v=822194586692261
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/906897721474496
Բնապահպանական բակային ճամբար

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Կենտրոնի մի քանի երեխաներին համայնքապետարանը հատկացրել է տրանսպորտից օգտվելու կտրոններ: Սակայն, երբ երեխաները ցույց են տալիս այդ կտրոնները վարորդներին՝ արժանանում են անհարգալից և կոպիտ վերաբերմունքի: Հայկական Կարիտասի անձնակազմը մի քանի անգամ խնդիրը բարձրաձայնել է համապատասխան պատասխանատուներին, սակայն ապարդյուն, հոգեբանական բռնությունը երեխաների նկատմամբ շարունակվում է, չկա ոչ մի իրավական սանկցիա կամ պատիժ այդ վարորդների դեմ, ովքեր նման կերպ են վարվում երեխաների հետ: Կան երեխաներ, ովքեր հրաժարվում

| |
|---|
| են օգտագործել այդ կտրոնները, քանի որ արդեն իսկ արժանացել են մասնակի վիրավորանքի: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

| |
|---|
| Հաջորդ եռամսյակում շարունակվում է սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական անհատական և խմբային աշխատանքները/կյանքի հմտությունների դասընթացները/:<br>Շարունակվում են կողմնորոշման խմբակները: Վերսկսվելու է ծնողների ինքնաօգնության խումբը և մայրիկների սրճարանը:<br>Երեխաների և ծնողների համար նախատեսվում են ճանաչողական, առողջ ապրելակերպին միտված քայլարշավներ:<br>Նախատեսվում է իրականացնել աշխատանքի փնտրելու հմտությունների դասընթացներ ծնողների համար: |

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011030732<br>ՀՎՀՀ 01506515<br>Գլխավոր քարտուղար՝<br>Սամվել Մուրադյան<br><br>______________________<br>(ստորագրություն)<br><br>Կ. Տ. | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>ք. Գյումրի , Հ.Սարգսյան 3-րդ նրբ., 8ա.<br>«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲԸ «Շիրակ»մ/ճ<br>Հ/Հ 220063350387000<br>ՀՎՀՀ 05514397<br><br>Գործադիր տնօրեն՝ Գագիկ Տարասյան<br><br>______________________<br>(ստորագրություն)<br><br>Կ. Տ. |